ԼՐԱՄՇԱԿՎԱԾ

Պ-367-14.11.2019-ՏՏԳԲ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ

ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ

Գ Լ Ո Ւ Խ II

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԳՈՎԱԶԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հոդված 1. ~~«Գովազդի մասին» 1996 թվականի հունիսի 4 ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2 րդ հոդվածի 1 ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ։~~

~~«գովազդ՝ տեղեկատվություն, որը տարբեր տեսակի տեղեկատվական միջոցների օգնությամբ հանրայնացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գաղափարները, նախաձեռնությունները, ծառայությունները, գործունեության տեսակները, ապրանքները, ապրանքային նշանները և ֆիրմային անվանումները»։~~

Հոդված 2. ~~«Գովազդի մասին» 1996 թվականի հունիսի 4 ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ։~~

~~«արտաքին գովազդ՝ տեխնիկական տարբեր տեսակի միջոցների ձևով ցանկացած գովազդի տարածում՝ այդ թվում պատկերների օգտագործմամբ, հանրային տեսանելի վայրերում, շենքերի և շինությունների վրա, ինչպես նաև դրանց ներսում, սակայն դրսից տեսանելի»։~~

Հոդված 3. ~~Օրենքի 11 րդ հոդվածը, «Քաղաքապետը» բառից հետո, լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ։~~

~~«Երևան քաղաքում արգելվում է տեղադրել կամ փակցնել ցանկացած տեսակի և չափսի արտաքին գովազդ առանց Երևանի քաղաքապետարանի թույլտվության»~~

‹‹Արգելվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապված հայտարարությունների տեղադրումը Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում, հենասյուների, էլեկտրասյուների, ծառաբների, քաղաքային կահավորանքների, ինչպես նաև ցանկացած այլ հանրային վայրերում՝ բացառությամբ բազմաբնակարան բնակելի շենքերում և Երևան քաղաքի վարչական սահմաններում այդ նպատակով տեղադրված հայտարարությունների համար նախատեսված վահանակների»։

Հոդված 4. ~~Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությունով՝ հետևյալ բովանդակությամբ~~

~~«Արգելվում է տրանսպորտային, ինչպես նաև ցանկացած այլ շարժական միջոցների ձևով էլեկտրոնային էկրանների միջոցով ցանկացած գովազդի ցուցադրումը կամ տեղադրումը»։~~

Հոդված 5. ~~Օրենքի 26-րդ հոդվածի 1.1. կետում «առանց արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու» բառերից հետո լրացնել « և սույն օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածներով նախատեսված պահանջները խախտելու» բառերը։~~

Հոդված 6. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից 1 ամիս հետո: